

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի շնորհավորանքի խոսքը Կանանց տոնի առթիվ

Սիրելի մայրեր, կանայք, քույրեր եւ դուստրեր Հայոց աշխարհի:

Ձեր ամենօրյա ներկայությունն է մեր կյանքը դարձնում բերկրալի, սիրով ու հավատով լի, ստեղծում ընտանեկան ջերմություն ու երջանկություն, ապահովում մեր ազգի հարատևության ուղին: Դուք եք մեր կյանքի անփոխարինելի հրաշալիքը, մեզ ժպիտ ու գեղեցկություն, մայրական գուրգուրանք ու քույրական քնքշանք պարգևողը, Երկունքի սուրբ խորհուրդը ձեր մեջ կրող, մեր աշխարհը նորացնող միակ աղբյուրը:

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ գարնանային այս սքանչելի տոնի առթիվ, մաղթում խաղաղ հայրենիք, ընտանեկան ու անձնական անափ երջանկություն, ծաղկառատ գարուններ, ամենայն սեր ու բարիք:

Լավագույն ցանկություններով՝

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան